ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 փետրվարի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

5
(3214)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԱՐԴԻԿ ՓՈՂ ՉՈՒՆԵՆ, ԲԱՅՑ ՎԱՐԿ ԵՆ ՎԵՐՑՆՈՒՄ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հպարտ հայտարարում է, թե մարդիկ հիփոթեքով տներ են գնում, շատ վարկ են վերցնում՝ իրողությունը ներկայացնելով իբրեւ ձեռքբերում: Իրականում այդ պատկերը մտահոգիչ է: Ինչո՞ւ, որովհետեւ ՀՀ վիճակագրական կոմիտեի դեկտեմբերի տվյալներով՝ տնային տնտեսություններին տրվող վարկերը ավելացել են սպառողական եւ հիփոթեքային վարկերի համապատասխանաբար 31.1%-ով եւ 26.3%-ով:

«Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրությամբ, ՀՀ քաղաքացիների կողմից սպառողական եւ հիփոթեքային վարկերի աճի տեմպը անհանգստացնող է, քանի որ այդ աճը շարունակում է էականորեն գերազանցել քաղաքացիների եկամուտների աճին: Այսինքն՝ բնակչության եկամուտները՝ աշխատավարձ, դրամական փոխանցումներ եւ այլ իրական ունեցվածք, այդ ընթացքում չեն աճել համապատասխան թվերով: Բայց, միեւնույն է, մարդիկ վարկեր են վերցնում:

Այսինքն՝ եկամուտների համեմատ վարկերի զգալի տարբերությունը խոսում է այն մասին, որ մարդիկ վարկերի տակ կքում են:

ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի կողմից ձեռք բերված անշարժ գույքի հետ կապված տեղեկությունները պաշտոնապես հաստատվել են: «Ժողովուրդ» օրաթերթի գրավոր հարցմանն ի պատասխան՝ Հակակոռուպցիոն կոմիտեն հայտնել է, որ տվյալ գործարքի առնչությամբ իրականացվում են ստուգողական գործողություններ: Հանրային բարձր հետաքրքրություն ներկայացնող տեղեկությունների հիման վրա մենք գրավոր հարցում էինք ուղարկել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Արթուր Նահապետյանին՝ խնդրելով պարզաբանել ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի կողմից ձեռք բերված անշարժ գույքի վերաբերյալ շրջանառվող տեղեկությունները: Խոսքը վերաբերում է Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Առինջ Բ թաղամասի 7/19 հասցեում գտնվող առանձնատանը, որի շուրջ, մեր տեղեկություններով, իրականացվել կամ իրականացվում էին օպերատիվ կամ ուսումնասիրական բնույթի գործողություններ:

Մանրամասները՝ «ԱրմԼուր.էյէմ» կայքում



Անցած տարեվերջին հայտարարվեց ռուսաստանաբնակ գործարար եւ բարերարներ Արթուր Ջանիբեկյանի ու Արթուր Սողոմոնյանի օժանդակությամբ լեգենդար «Արարատ 73»-ի մասին պատմող գեղարվեստական ֆիլմի նկարահանման մասին, որն արդեն մեծ հաջողությամբ ցուցադրվում է հետխորհրդային տարածքում: Ֆիլմի ռեժիսորն է Միեր Մկրտչյանը, իսկ սցենարի համահեղինակն ու գլխավոր պրոդյուսերը՝ Վալերի Սահարյանը: Որոշ շրջանակներ քննադատեցին ֆիլմը՝ իբրեւ ռուսական փափուկ ուժ, քանզի ֆիլմում կա հայ-ուկրաինական ֆուտբոլային հակադրության մաս: Ինչպես մեզ հետ զրույցներում փաստեցին ավագ սերնդի ֆուտբոլասերներ, իրականում «Արարատ»-ի ոսկե շրջանում Հայաստանում մարդիկ խոսել են ուկրաինական թիմերի՝ օրինակ Կիեւի «Դինամո»-ի օգտին աշխատելու (ասենք՝ պետք եկած ժամանակ պարտվել ու միավոր տալ «Դինամո»-ին) մասին ու այն ժամանակ դա ընկալվել է որպես ցավալի եղելություն ու ֆիլմում կարող է արտացոլված լինել, քանզի այն ժամանակ կար նման տեսակետ, համոզմունք եւ ոչ միայն ուկրաինական թիմերի մասին: Ռուսալեզու տարբերակում ֆիլմը կոչվում է «Ոսկե Դուբլ», իսկ Հայաստանում պրեմիերան տեղի կունենա փետրվարի 5-ին «Մոսկվա» կինոթատրոնում:

Շարունակությունը՝ «ԱրմԼուր.էյէմ» կայքում

«Գեղարդ» հիմնադրամը փաստական նյութեր է ձեռք բերել այն մասին, որ Ադրբեջանը վանդալիզմի է ենթարկել ԼՂ-ում գտնվող Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին: «Ադրբեջանը շարունակում է հետեւողականորեն ոչնչացնել հայկական բնիկության հետքերն Արցախում՝ այն ծառայեցնելով տարածաշրջանային իր հավակնություններին: Արցախի մշակութային ցեղասպանության ու հայկականությունը բնաջնջելու քաղաքականությունը շարունակվում է առ այսօր: «Գեղարդ» հիմնադրամի ձեռք բերած փաստական նյութերից երեւում է, որ ադրբեջանական վանդալիզմի թիրախում է հայտնվել Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին: Ադրբեջանցիները կոտրել են եկեղեցու բակում տեղադրված խաչքարերից առնվազն մեկը, պոկել եկեղեցու սրբապատկերները: Ցավալի է, որ «քրիստոնեական արժեքների պահպանմամբ» շահագրգիռ միջազգային կառույցներն ու դրանցում ներգրավված անձինք կարծես թե չեն նկատում համընդհանուր քրիստոնեական ժառանգության մաս կազմող հայկական քրիստոնեական հուշարձանների պահպանման հարցի կարեւորությունը»:

Շարունակությունը՝ «ԱրմԼուր.էյէմ» կայքում

ԶՐՈՒՅՑ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԴՐՍՈՒՄ՝ ԱՆՆԱԽԱԴԵՊ ՉԷ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի հրավերով Եպիսկոպոսաց ժողովը տեղի կունենա Ավստրիայի Սանկտ Փյոլթըն քաղաքում՝ փետրվարի 16-19-ին: Դրսում Եկեղեցական ժողով հրավիրելը որոշ հոգեւորականներ, այդ թվում՝ կարգալույծ հռչակված, ինչպես նաեւ որոշ քաղաքական ուժեր եւ գործիչներ քննադատաբար ընդունեցին: Այս հարցի շուրջ ArmLur.am-ը զրուցել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար» Մանուկյաններ մատենադարանի եւ հրատարակչության բաժնի տնօրեն Տեր Արարատ քահանա Պողոսյանի հետ:



-Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի կողմից փետրվարի 16-19-ին Ավստրիայում հրավիրված է Եկեղեցական ժողով: Ո՞րն է լինելու Ժողովի հիմնական օրակարգային հարցերը, եւ ինչո՞ւ որոշվեց Ժողովը հրավիրել Հայաստանից դուրս:

-Եկեղեցական ժողովը մասնավոր Եկեղեցական ժողով է, որովհետեւ մենք բազմաթիվ եկեղեցական ժողովներ ունենք՝ քահանայական, միաբանական: Տվյալ դեպքում սա եպիսկոպոսական ժողով է, եւ եպիսկոպոսական ժողովի հրավիրումն Ավստրիայում առանձնապես այդպիսի մեծ իրադարձության առիթ չպիտի լիներ, որովհետեւ ժողովի ոչ թե վայրն է կարեւոր, ըստ էության, այլ ժողովն ում կողմից է հրավիրվում եւ ովքեր են դրա մասնակիցները: Այսինքն՝ ժողովի որոշումների օրինականությունը կախված է ժողովի հրավիրողներից եւ մասնակիցներից: Այս շահարկումների վերաբերյալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հանդես է եկել հայտարարությամբ՝ կարճ, համառոտ եւ բովանդակալից: Ե՛ւ ես, ե՛ւ այլ հոգեւորականներ բազմիցս անդրադարձել ենք այս հարցին՝ նշելով, որ դա աննախադեպ երեւույթ չէ, այլ նախադեպը ունեցող երեւույթ:

Հիշեցնեմ, որ մինչ այս՝ նոյեմբերին, հայտարարվեց, որ ժողովը տեղի կունենա դեկտեմբերին Սուրբ Էջմիածնում, այնուհետեւ հետաձգվեց: Ուստի Մայր Աթոռը շատ իմաստուն կերպով որոշեց, որ ժողովը տեղի կունենա դուրսը, իսկ եթե դրսում է լինելու, ապա այլեւս կարեւոր չէ, թե որ երկրում կամ որ քաղաքում տեղի կունենա: Ժողովը կարեւոր է նրանով, թե ով է հրավիրում եւ ովքեր են լինելու ժողովի մասնակիցները:

-Եղե՞լ են նման դեպքեր, երբ եկեղեցական ժողովը գումարվել է այլ երկրներում:

-1956 թվականին այդ ժողովը տեղի է ունեցել Կահիրեում, դրանից ավելի վաղ՝ 1651 թվականին, նմանատիպ մի ժողով տեղի է ունեցել Երուսաղեմում, ավելին՝ 1976 թվականին Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած Եպիսկոպոսական ժողովն իր արձանագրված, հրատարակված պաշտոնական հաղորդագրության մեջ շեշտել է, որ հաջորդ տարի Եպիսկոպոսական ժողովը պիտի տեղի ունենա Երուսաղեմում: Այսինքն՝ դրսում եպիսկոպոսական կամ որեւէ եկեղեցական ժողով գումարելը որեւէ եկեղեցու համար խնդիր չէ: Միակ ժողովը, որ սահմանափակված է իր տեղում, այն էլ կարելիության պայմաններում, դա Ազգային Եկեղեցական Ժողովն է, որ թղթի վրա սեւով սպիտակի վրա արձանագրված է՝ Ազգային Եկեղեցական Ժողովը Կաթողիկոսի ընտրության դեպքում լինում է Սուրբ Էջմիածնում:

-Ինչքա՞ն հաճախ պետք է հրավիրվի եկեղեցական ժողովը:

-Ես նշեմ մեկ փաստ. վերջին 50 տարվա մեջ 1950-ականներից մինչ 90-ականների վերջ տեղի են ունեցել ընդամենը մի քանի Եպիսկոպոսական ժողովներ: Հինգ եպիսկոպոսական ժողով՝ 1956թ., 1969թ., 1976թ., 1991թ., 1998թ.: Հիսուն տարվա մեջ հինգ Եպիսկոպոսական ժողով: Եկեղեցու կյանքում ժողովական կյանքի պակաս չկա, դրանք գրեթե ամենշաբաթյա բնույթ են կրում՝ տարբեր ձեւաչափերով եւ տարբեր մասնակիցներով: Վեհափառ Հայրապետի ժամանակ միայն 2013-2014 տեղի են ունեցել իրար հաջորդող Եպիսկոպոսական ժողովներ, որոնք իրենց մասնակիցների կազմով եղել են բացառիկ: Այս ժողովներին մասնակցել են մեր եկեղեցու նվիրապետության բոլոր գահակալներն իրենց միաբան եպիսկոպոսներով: Էլ չենք խոսում, որ Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին բազմաթիվ տեղական եպիսկոպոսական ժողովներ են եղել, այսինքն՝ Հայաստանի եւ ներքին սփյուռքի նաեւ այլ Եպիսկոպոսական ժողովներ: Էլ չենք խոսում Գերագույն հոգեւոր խորհուրդի ժողովների՝ տարվա մեջ բազմիցս անելու, միաբանական ժողովների, որ պարբերաբար արվում է:

Այսինքն՝ այս ամենը պարզապես շահարկվում է կեղծ աղմուկ Սուրբ Եկեղեցու շուրջ, Սուրբ Էջմիածնի շուրջ, եւ սրանք պիտի իրենց գնահատականը գտնեն եւ գտնում են:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ Է

ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ԾԱՂԿԱՄԱՆՆԵՐ ԵՆ ՆՎԻՐԵԼ

2026 թվականի հունվարի 8-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն ընդունել է Հայաստան-Իրան քաղաքական խորհրդակցությունների անցկացման նպատակով Երեւանում գտնվող ԻԻՀ ԱԳ նախարարի տեղակալ Մաջիդ Թախթ Ռավանչիին:

ԱԳՆ հաղորդմամբ, քննարկվել են Հայաստան-Իրան երկկողմ հարաբերությունների զարգացման հարցեր. երկուստեք ընդգծվել է հարաբերությունները ռազմավարական մակարդակի բարձրացնելու հարցում արտահայտված քաղաքական համաձայնությունը, անդրադարձ է կատարվել այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքներին:

Այցի շրջանակներում ԻԻՀ ԱԳ նախարարի տեղակալ Մաջիդ Թախթ Ռավանչին Արարատ Միրզոյանին նվիրել է «Խաթամաքարի» ոճի պղնձե ծաղկամաններ:

Ծաղկամաններն արժեցել են 57 հազար դրամ, որոնք Միրզոյանը հայտարարագրել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նվերների ռեեստրում:

Հիշեցնենք, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածում, որով սահմանված են հանրային պաշտոն զբաղեցնող անձի եւ հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները, նշվում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողներին թույլատրվում է ընդունել միայն հետեւյալ նվերները.

1. պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաեւ աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը,

2. ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը,

3. կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով եւ նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքով,

4. օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները:

Եթե 1-ին կամ 4-րդ կետերով նախատեսված նվերի արժեքը (բացառությամբ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունների) գերազանցում է 60.000 դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները պարտավոր են սահմանված կարգով այն հանձնել պետությանը կամ համայնքին:

Բացի դրանից, հանրային պաշտոն զբաղեցնող անձը եւ հանրային ծառայողը պարտավոր են իրենց կողմից ստացված թույլատրելի նվերները հաշվառել նվերների հաշվառման ռեեստրում:

40.000 դրամը չգերազանցող արժողությամբ թույլատրելի նվերները ենթակա չեն հաշվառման, բացառությամբ նույն աղբյուրից 6 ամսվա ընթացքում նվերի ստացման պարբերական (5 եւ ավելի) բնույթ կրող դեպքերի:

Նվերների արժեքը գնահատվում է՝ հիմք ընդունելով այն ողջամիտ շուկայական արժեքը, որը հնարավոր է գնահատել բաց աղբյուրների միջոցով:

Հավելենք նաեւ, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողներին, եթե որեւէ նվեր է տրվում իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացմանն առնչվող, ապա անկախ դրա չափից, գնից, եթե անգամ այն արժե 100 դրամ, չեն կարող ընդունել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿՈՆՁՈՐՅԱՆԻ ՕԳՆԱԿԱՆԸ՝ ՔՊ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Օրերս ՔՊ-ական Նատալյա Սինորյանը հայտնեց, որ 2026 թվականի խորհրդարանական ընտրություններում ինքնառաջադրվել է որպես պատգամավորի թեկնածու, եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Վարչության որոշմամբ վերջինիս թեկնածությունը գրանցվել է:

Նատալյա Սինորյանը այժմ Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության փորձագետ է եւ Երեւանի ավագանու անդամ:

Համաձայն 2024 թվականի տարեկան հայտարարագրի՝ Սինորյանը ո՛չ անշարժ գույք է հայտարարագրել, ո՛չ տրանսպորտային միջոցներ, սակայն 90 օրից ավելի շահագործում է սեփականության իրավունքով իրեն չպատկանող բնակարան Երեւանում:

ՔՊ-ական փորձագետի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 50 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները կազմել են 100 դոլար, 200 հազար դրամ:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 7 մլն 658 հազար դրամ, որից 5 մլն 258 հազար դրամն աշխատանքի վարձատրություն է ՀՀ ԱԺ աշխատակազմից: Եկամուտներից 900 հազար դրամն այլ եկամուտ է Երեւանի քաղաքապետարանից, իսկ 1,5 մլն դրամը ստացված փոխառություններ են Կոնվերս բանկից:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 4 մլն 799 հազար դրամ:

Նատալյա Սինորյանը ՔՊ անդամ է:

Հետաքրքիրն այն է, որ Նատալյա Սինորյանի հետ համատեղ բնակվող անձը՝ Վիկտորյա Պետրոսյանը, եւս աշխատում է Ազգային ժողովում, սակայն վերջինս թոշակառու է:

ArmLur.am-ը Ն. Սինորյանից փորձեց տեղեկանալ՝ ինչպես է ստացվել, որ վերջինիս հետ համատեղ բնակվող անձը նշել է, որ աշխատում է Ազգային Ժողովում եւ թոշակառու է: Արդյոք ճիշտ ենք հասկանում, որ 87-ամյա կինն աշխատում է ԱԺ-ում: Սինորյանը նշեց, որ հավանաբար համակարգային խնդիր է: Իր հետ բնակվող անձը տատիկն է, որը երբեւէ չի աշխատել:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՖՐԱՆՍԻԱ–ՀՆԴԿԱՍՏԱՆ

Ֆրանսիան մտադիր է կենտրոնանալ Հնդկաստանի հետ համագործակցության ամրապնդման վրա՝ Չինաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ առճակատման ֆոնին: Այս մասին հայտարարել է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ժան-Նոել Բարոն Liberation թերթին տված հարցազրույցում: Բարոյին հարց են ուղղել այն մասին, թե Փարիզը որ գործընկերների հետ է մտադիր զարգացնել համագործակցությունը: «Օրինակ՝ Հնդկաստանի»,- ասել է նա: Բարոյի խոսքով՝ ներկայիս արտաքին քաղաքականության պայմաններում Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում եւ Հարավարեւելյան Ասիայում շատ երկրներ կան, որոնք հետեւում են Եվրոպայի քաղաքականությանը, քանի որ այդ երկրները շահագրգռված են իրենց ինքնուրույնության պահպանմամբ:

Հնդկական ThePrint հրատարակությունը հունվարի 15-ին հաղորդել էր, որ Նյու Դելին եւ Փարիզը համաձայնեցրել են Հնդկաստանի ռազմաօդային ուժերի համար 114 Rafale կործանիչ գնելու պայմանները. գնման պաշտոնական ձեւակերպումը կավարտվի 2026թ. վերջին կամ 2027թ. սկզբին: Եթե պայմանագիրը ստորագրվի 2027թ. սկզբին, ապա շահագործման պատրաստ առաջին 18 ինքնաթիռի մատակարարումը կսկսվի 2030 թվականից:

Պայմանագրի կատարման արդյունքներով Հնդկաստանը կդառնա Rafale ինքնաթիռների խոշորագույն օպերատորը Ֆրանսիայի սահմաններից դուրս: 2016 թվականին Նյու Դելին գնել է 36 Rafale ինքնաթիռ, իսկ 2025 թվականին Հնդկաստանը Rafale Marine եւս 26 ինքնաթիռ է պատվիրել իր ռազմածովային ուժերի համար:

Հնդկաստանի ԱԳ նախարար Սուբրամանյամ Ջայշանքարը հունվարի 7-ին հայտարարել է, որ Նյու Դելին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի այցին սպասում է մոտ ժամանակներս:

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Մուշեղ եւ Վահան Սրբազանների նկատմամբ նույնպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Ավելի վաղ հայտնել էինք, որ Նաթան արքեպիսկոպոսի, Հայկազուն արքեպիսկոպոսի, Հովնան եպիսկոպոսի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Հիշեցնենք, որ երեկ ՀԱԵ Գուգարաց թեմի առաջնորդ Հովնան եպիսկոպոս Հակոբյանին ՔԿ-ն իբրեւ մեղադրյալ է ներգրավել քրեական գործում եւ տվել ստորագրություն չհեռանալու մասին: Այսպես իշխանությունները խոչընդոտում են, որպեսզի ազդեցիկ հոգեւորականները չմեկնեն Ավստրիա ու չմասնակցեն Եպիսկոպոսաց ժողովին: Այս մասին լրագրողներին հայտնել է փաստաբան Արմինե Ֆանյանը:

Երեկ առավոտվանից ոստիկանության միջոցով ծանուցագրեր են հանձնվում Գերագույն Հոգեւոր Խորհրդի եպիսկոպոս անդամներին որպես մեղադրյալ Քննչական կոմիտե ներկայանալու համար: Գործը կապված է Մասյացոտնի թեմի առաջնորդին կարգալույծ անելու Գերագույն Խորհրդի որոշման հետ: Սրբազանները հրավիրվել են Քննչական կոմիտե մեղադրյալի կարգավիճակով:

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔՈՎ ՀԵՌԱՑԱՎ

ԲՆԱԿԱՐԱՆ Է ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԵԼ

ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը երկու նոր հրամանագիր է ստորագրել, որոնցից մեկի համաձայն՝ Արտյոմ Սմբատյանը ազատվել է միասնական սոցիալական ծառայության պետի պաշտոնից: Մեկ այլ հրամանագրի համաձայն՝ Արտյոմ Սմբատյանը նշանակվել է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանի առաջին տեղակալ:

ArmLur.am-ը ներկայացնում է, թե ինչ ունեցվածքով հեռացավ Արտյոմ Սմբատյանը Միասնական սոցիալական ծառայությունից:

Ըստ մամուլի՝ Արտյոմ Սմբատյանը Արսեն Թորոսյանի մտերիմ ընկերն ու բարեկամն է, որը առողջապահության փոխնախարար է եղել հենց Թորոսյանի օրոք: Սմբատյանը նաեւ նախկինում զբաղեցրել է ՊԵԿ նախագահի տեղակալի պաշտոնը:

Սմբատյանը այս պաշտոնին նշանակվել էր 2025 թվականի սեպտեմբերի 9-ին եւ գրեթե մեկ ամիս անց ներկայացրել է պաշտոնեական պարտականությունները ստանձնելու հայտարարագիր:

Համաձայն հայտարարագրի՝ Արտյոմ Սմբատյանը 2023 թվականին բնակարան է նվիրատվություն ստացել Երեւանում՝ Էրեբունի վարչական շրջանում, Գոհար Հարությունյանի կողմից:

Սմբատյանը եւս մեկ բնակարան է ձեռք բերել Ծիծեռնակաբերդի խճուղի 13 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքում:

Տրանսպորտային միջոցներ Սմբատյանը չի հայտարարագրել:

Բանկային հաշիվների մնացորդները ՄՍԾ պետի պաշտոնը ստանձնելիս եղել են 30 մլն 486 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 3 մլն 415 հազար դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանի եկամուտները կազմել են 17 մլն 144 հազար դրամ, որից 15 մլն 816 հազար դրամն աշխատանքի վարձատրություն է «ՍԱՍ-ԳՐՈՒՊ»-ից, իսկ 1 մլն 327 հազար դրամը եկամտային հարկի վերադարձ է ՀՀ Ֆինանսների նախարարությունից:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ կազմել է 16 մլն 143 հազար դրամ, որը բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է:

Արտյոմ Սմբատյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է: Այժմ էլ ստացվում է, որ «որտեղ Թորոսյանը, այնտեղ էլ Սմբատյանը» սկզբունքն է գործում:

Հարկ է նշել, որ Սմբատյանի կինը՝ Գոհար Մկրտչյանը, աշխատում է Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ում որպես մանկաբարձ-գինեկոլոգ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՇԽԱՏՈՒՄ Է ԱՀԿ–Ի ՀԵՏ

ՄԱԿ-ում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչի տեղակալ Ժիրայր Անանյանը ելույթ է ունեցել «Իրավիճակը Միջին Արեւելքում» խորագրով ՄԱԿ Անվտանգության խորհրդի բաց քննարկմանը՝ ներկայացնելով Հայաստանի մոտեցումները տարածաշրջանում զարգացումների վերաբերյալ:

Այս մասին հայտնում են ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչությունից:

«Անդրադառնալով Միջին Արեւելքին Հայաստանի աշխարհագրական մերձակայությանը, տարածաշրջանի երկրների հետ պատմականորեն բարեկամական հարաբերություններին, ինչպես նաեւ հայկական համայնքների նշանակալի ներկայությանը՝ ՄԱԿ-ում ՀՀ ՄՆ տեղակալն առանձնանշեց հայ խաղաղապահների ներդրումը Լիբանանում ժամանակավոր տեղակայված խաղաղապահ առաքելությունում /UNIFIL/»,-ասված է ներկայացուցչության տարածած հաղորդագրության մեջ:

Ժիրայր Անանյանը նաեւ նկատել է, որ ՀՀ կառավարությունն աշխատանքներ է տանում Առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ՝ Գազայից տասնյակ երեխաների բուժումը Հայաստանի բուժհաստատություններում կազմակերպելու նպատակով:

Նա նաեւ ընդգծել է, որ Հայաստանը ողջունում է Գազայի վերաբերյալ 2025թ. նոյեմբերի 17-ին ընդունված ՄԱԿ ԱԽ 2803 բանաձեւը եւ, որպես հիմնադիր անդամ, ստորագրել է Խաղաղության խորհրդի կանոնադրությունը՝ վերահաստատելով հետհակամարտային կայունացման, վերակառուցման եւ խաղաղության ամրապնդման վերաբերյալ Հայաստանի սկզբունքային հանձնառությունը՝ շեշտելով Խաղաղության խորհրդի շրջանակներում ակտիվորեն ներգրավվելու ՀՀ պատրաստակամությունը:

Նշվում է, որ իր խոսքում Անանյանը նաեւ առանձնանշել է Հայաստանի հետեւողական սատարումը բարեկամ Սիրիայի միասնականությանը, ինքնիշխանությանը եւ տարածքային ամբողջականությանը՝ հավելելով, որ սիրիական առաջնորդությամբ իրականացվող հետհակամարտային վերականգնման եւ խաղաղաշինության գործընթացը կարեւորագույն նշանակություն ունի երկրում տեւական խաղաղություն ապահովելու համար:

ՆՈՐ ՀԱՐՎԱԾՆԵՐ Է ՀԱՍՑՐԵԼ

Ռուսաստանը եւ Ուկրաինան նոր հարվածներ են փոխանակել: Չերկասիի մարզում ռուսական անօդաչու թռչող սարքերի հարվածներից 4 մարդ է վիրավորվել: Այս մասին հաղորդում է BBC-ի ռուսական ծառայությունը: Բռնկվել են հրդեհներ: Տեղական իշխանությունները չեն հայտնել, թե կոնկրետ ինչ օբյեկտներ են հարվածի տակ հայտնվել:

Բացի այդ, Ռուսաստանը փետրվարի 1-ին անօդաչու թռչող սարքերով հարված է հասցրել Ուկրաինայի Դնեպրոպետրովսկի մարզի Պավլոգրադի շրջանում գործող ԴՏԷԿ էներգետիկ ընկերության ծառայողական ավտոբուսի մերձակայքում, որի հետեւանքով առնվազն 12 մարդ է զոհվել, եւս 16-ը՝ վիրավորվել:

«Ռուսաստանը լայնամասշտաբ ահաբեկչական հարձակում է իրականացրել ԴՏԷԿ-ի հանքերի վրա Դնեպրոպետրովսկի մարզում: Հարձակումներից մեկի էպիկենտրոնում է հայտնվել ծառայողական ավտոբուսը, որը հերթափոխից հետո հանքագործներին տեղափոխում էր հանքից», - ասվում է ընկերության հայտարարության մեջ: Մարզային դատախազության տվյալներով՝ հարվածը տեղի է ունեցել տեղական ժամանակով ժամը 15:45-ի սահմաններում:

Ուկրաինայի հանքագործների անկախ արհմիության ղեկավար Միխայիլո Վոլինեցը հայտնել է, որ հարձակմանը մասնակցել է ռուսական չորս «Շահեդ» ԱԹՍ:

Իր հերթին, ռուսական կողմը հայտնել է, որ Բելգորոդի մարզի Ստարի Օսկոլ քաղաքում գիշերն ուկրաինական կողմը հարվածել է մասնավոր տան, որտեղ հրդեհ է բռնկվել: Տունը մասամբ փլուզվել է: 2 մարդ զոհվել է: Ըստ ՌԴ պաշտպանության նախարարության՝ ՀՕՊ համակարգերը խոցել են 31 ԱԹՍ, որոնցից 22-ը՝ Բելգորոդի մարզի երկնքում:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏ

ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

Փարաքարի նախկին ՔՊ-ական համայնքապետ Լյուդվիգ Գյուլնազարյանի մասնակցությամբ միջադեպի գործով նախաքննության ավարտ է հայտարարվել եւ գործը ուղարկվել է դատարան:

2024 թվականին Երեւանի Աջափնյակ համայնքում կրակոցներ էին հնչել: Ավտոլվացման կետերից մեկում կեսգիշերին վիճաբանությունն ավարտվել էր սպանությամբ: Դեպքի վայրից հրազենային վնասվածքով 42-ամյա տղամարդուն տեղափոխել էին հիվանդանոց, որտեղ էլ մահացել էր:

Ըստ քննչականի՝ կրակողը սպանվածի եղբայրն է: Կրակոցների կիզակետում է եղել նաեւ ՔՊ-ական Լյուդվիգ Գյուլնազարյանը:

Ինչ էր անում Փարաքարի համայնքապետը դեպքի վայրում, արդյո՞ք վիճաբանության կողմերից էր:

Մամուլում տեղեկություններ կան, որ նա էլ է ոտքից վիրավորվել: Ըստ հրապարակումների՝ ավտոլվացման կետը, որտեղ տեղի է ունեցել միջադեպը, Փարաքարի համայնքապետի ընկերոջն է պատկանում: Վիճաբանության ժամանակ համայնքապետը դեպքի վայր է գնացել իր ընկերներին աջակցելու նպատակով: Վիճաբանության ընթացքում կրակոցներ են հնչել:

Արդյունքում մեղադրյալի աթոռին հայտնվեց մեկ անձ՝ Արմեն Մանուկյանը, որին մեղադրանք է առաջադրվել. 2024 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 21:00-ից մինչեւ 22:00-ն ընկած սահմաններում, Երեւան քաղաքի Նազարբեկյան թաղամասի 18/3 հասցեում՝ ավտոտեխսպասարկման եւ ավտոլվացման կետում, ապօրինի կերպով կրած հրազենի գործադրմամբ փորձել է այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով դիտավորությամբ ապօրինաբար կյանքից զրկել Վլադիմիր Բազայանին, սակայն հանցագործությունն իր կամքից անկախ հանգամանքներով չի իրագործվել ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված հանցակազմի հատկանիշի՝ վտանգավոր հետեւանքի բացակայության հետեւանքով:

Բացի այդ, իր դիտավորության մեջ ընդգրկված՝ Վլադիմիր Բազայանին սպանելու նպատակին հասնելու համար գործադրված հանցավոր գործողությունների արդյունքում անուղղակի դիտավորությամբ այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով ապօրինաբար կյանքից զրկել է Արթուր Մանուկյանին, ինչպես նաեւ ուղղակի դիտավորությամբ միջին ծանրության մարմնական վնասվածք է պատճառել Լյուդվիգ Գյուլնազարյանին:

Փարաքարի ՔՊ-ական համայքնապետ Գյուլնազարյանի համար կրակոցների կիզակետում լինելը ճակատագրական դարձավ, ու սահմանափակվեցին միայն նրան Փարաքարի համայքապետի պաշտոնից հեռացնելով: Իսկ ահա կրակոցներ արձակած անձը, որի կրակոցից հարազատ եղբայրը մահացավ, այսօր հայտնվել է դատարանի առաջ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԹՄՐԱՄԻՋՈՑ ԷՐ ՊԱՀՈՒՄ

Քրեական ոստիկանության Տավուշի մարզային վարչությունում հունվարի 29-ին օպերատիվ տեղեկություն էր ստացվել, որ Բերքաբեր գյուղի 47-ամյա բնակիչը թմրամիջոց է պատրաստում եւ պահում: Վարչություն հրավիրված 47-ամյա տղամարդը բացատրական աշխատանքի արդյունքում խոստովանել է, որ պահում է հողամասում աճեցրած կանեփից պատրաստած թմրանյութ:

Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում կատարված զննությամբ 47-ամյա տղամարդու առանձնատան տանիքում եւ անասնագոմում հայտնաբերվել է մարիխուանա տեսակի թմրամիջոցի նմանվող ընդհանուր 183,54 գրամ զանգված: Կատարվում է նախաքննություն:

ՉԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ

Հունվարի 14-ին՝ ժամը 13:38-ին, համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժին ստացվեց ահազանգ գողության վերաբերյալ: Էջմիածնի Պուշկինի փողոցում կայանված «Օպել» մակնիշի մեքենայի սրահից գողացել էին դրամապանակ:

Մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ մեքենայի դռները կողպված չեն եղել, իսկ դրամապանակում կար 250 հազար դրամ:

Վաղարշապատի համայնքային ոստիկանների ձեռարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումներն արագ արդյունք տվեցին: Ըստ ստացված տեղեկության՝ գողությունը կատարել էին 50 եւ 43 տարեկան երկու տղամարդիկ:

Նույն օրը՝ երեկոյան, երկուսն էլ հայտնաբերվեցին Էջմիածնի Ծաղկաբուծական թաղամասում, ձերբակալվեցին, տեղափոխվեցին բաժին, որտեղ էլ խոստովանեցին արարքը:

Հետագա միջոցառումներով իրավապահները պարզեցին, որ նրանք, բացի այս, կատարել են եւս մեկ գողություն:

Հանգամանքները պարզվում են:

37 ՓԱԹԵԹ ՄԱՐԻԽՈՒԱՆԱ

Համայնքային ոստիկանության Մարտունու բաժնի ծառայողները ստացած օպերատիվ տվյալն իրացրին հունվարի 24-ին: Թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու եւ պահելու կասկածանքով ժամը 17-ին բաժին ներկայացվեց Աստղաձոր գյուղի բնակիչ 24-ամյա մի երիտասարդ: Ընդունելով, որ ոստիկանների տեղեկությունը ճիշտ է, նա հայտնեց, որ բակում կայանված «Վոլքսվագեն» եւ իր կողմից շահագործվող «Օպել» մակնիշի մեքենաներում թմրամիջոց է պահում:

Նախաձեռնվեց քրեական վարույթ: Զննությամբ «Վոլքսվագենի» սրահում հայտնաբերվեց 36 փաթեթ՝ ընդհանուր մոտ 83 գրամ մարիխուանայի նմանվող զանգվածներով, իսկ «Օպելում»՝ կաթուցիչ եւ նույն զանգվածով փաթեթ:

Ըստ երիտասարդի՝ զանգվածները մարիխուանա են, ձեռք է բերել «Տելեգրամ» հավելվածի միջոցով՝ անձնական օգտագործման համար:

ՄԵՂԱԴՐՎՈՒՄ ԵՆ ԿԱՇԱՌՔ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԵՋ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում նախաձեռնված քրեական վարույթով հիմնավորվել է, որ Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի առանձին պաշտոնատար անձինք, օգտագործելով իրենց ծառայողական լիազորությունները, մի շարք քաղաքացիների օգտին ապօրինի անգործության դիմաց կաշառք են ստացել:

Մասնավորապես՝ նախաքննությամբ պարզվել է, որ նշված պաշտոնատար անձանցից մեկը, նախապես տեղյակ լինելով նույն վարչական շրջանում քաղաքացու կողմից առանց թույլտվության իրականացվող ապօրինի շինարարական աշխատանքների մասին, 2025 թվականի նոյեմբերին նրանից պահանջել է 200.000 ՀՀ դրամ կաշառք՝ մինչեւ 2,5 միլիոն դրամի չափով տուգանք առաջացնող իրավախախտումը չարձանագրելու համար:

Նախաքննությամբ պարզվել է նաեւ, որ մյուս պաշտոնատար անձը եւս, տեղյակ լինելով տվյալ վարչական շրջանի հասցեներից մեկում իրականացվող ապօրինի շինարարական աշխատանքների մասին, հիշյալ հասցեի բնակչի օգտին ապօրինի անգործություն դրսեւորելու եւ նշված խախտումը չարձանագրելու նպատակով նրանից պահանջել եւ 2025 թվականի հոկտեմբերին ստացել է կաշառք:

Պաշտոնատար երկու անձանց մեղադրանքներ են ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Նրանցից մեկի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը: Կաշառք տված անձին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Վերը նշված անձանց վերաբերյալ քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՕԴԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Պետական եկամուտների կոմիտեն, հավատարիմ մնալով պետության եւ հանրային շահի պաշտպանության իր առաքելությանը, շարունակում է հետեւողական եւ անզիջում պայքար մղել ՀՀ պետական սահմանով թմրամիջոցների ապօրինի տեղափոխման դեպքերի բացահայտման ուղղությամբ:

Միջազգային գործընկերների հետ, համագործակցության շրջանակում, օրերս ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչություն տվյալներ էին ստացվել, որ Հայաստան է ժամանել Նիդերլանդների Թագավորության քաղաքացի Ռ.Դ.-ն, ով. հնարավոր է, մաքսանենգ եղանակով իր հետ ներմուծել է թմրամիջոցներ: Ձեռնարկված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ քաղաքացին նույն օրը Վիեննա-Երեւան չվերթով ժամանել է Հայաստան ու հանգրվանել Երեւան քաղաքի հյուրանոցներից մեկում: Որոնողական աշխատանքների արդյունքում Նիդեռլանդների Թագավորության քաղաքացին հայտնաբերվել եւ հրավիրվել է մաքսային հսկողության գոտի եւ ռենտգենային սկանավորման միջոցով ենթարկվել անձնական մաքսային զննման: Արդյունքում, նրա որովայնի շրջանում նկատվել են կասկածելի օտար մարմիններ:

Ռ.Դ.-ն տեղափոխվել է «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն, որտեղ քաղաքացու մարմնից դուրս է բերվել «կոկաին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ ընդհանուր 845 գրամ քաշով 50 պատիճ:

Թմրամիջոցների մաքսանենգություն կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով նա ձերբակալվել է:

ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության եւ ԱԱԾ տնտեսական անվտանգության եւ կոռուպցիայի հակազդման գլխավոր վարչության աշխատակիցները համատեղ իրականացրել են օպերատիվ-հետախուզական լայնածավալ միջոցառումներ:

Պարզվել է թմրամիջոցների ՀՀ ներկրումը եւ հանրապետության տարածքում դրանց հետագա իրացումը կազմակերպած հնարավոր անձանց ինքնությունը: «Վերահսկելի մատակարարում եւ գնում» օպերատիվ հետախուզական միջոցառման շրջանակում, Երեւանի հասցեներից մեկում, թմրամիջոցների մաքսանենգություն եւ իրացում կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալվել եւ Մաքսանենգության դեմ պայքարի վարչություն է տեղափոխվել եւս 2 քաղաքացի: Ձերբակալվածներ Ռ.Դ.-ն, Ա.Պ.-ն եւ Ս.Մ.-ն ներկայացվել են ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն, որտեղ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ եւ 399-րդ հոդվածների հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում քաղաքացիները ձերբակալվել են, նրանց բնակության վայրերում իրականացվել են խուզարկություններ:

● *Նախորդ շաբաթվա ընթացքում տուժել է 82 մարդ: Փրկարարական գործողությունների արդյունքում փրկվել է 6 մարդ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԱՂԲ ԵՆ ՆԵՏՈՒՄ ԱՂՍՏԵՎ ԳԵՏ

Տավուշի մարզկենտրոն Իջեւան քաղաքում վերջին տարիներին կանոնավոր աղբահանություն է կատարվում, քաղաքի փողոցներում տեղադրվել են տասնյակ աղբամաններ, որտեղից աղբատար մեքենաները պարբերաբար աղբը դատարկում, տեղափոխում են համայնքի աղբավայր:

Թեեւ աղբահանության վարձավճարը ընտանիքի մեկ շնչի հաշվով ընդամենը 100 դրամ է կազմում, սակայն բազում բնակիչներ տարիներով աղբահանության վճարի մեծ պարտքեր ունեն: Նրանց համար վատ սովորույթ դարձել աղբահանության վճարը չմուծելը: Համայնքապետարանը այդ գումարները գանձելու համար ստիպված է վարչարարություն կիրառել: Իջեւանի համայնքապետարանը «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցել է վարչական վարույթներ՝ աղբահանության վճարը գանձելու հարցը քննելու նպատակով:

Համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանը հունվարի 30-ին որոշել է աղբահանության վճարի գումար գանձելու պահանջներ ներկայացնելու մասին, որպես աղբահանության ծառայության համար գանձվող վճար, քաղաքացի Նարեկ Խառատյանից հօգուտ Իջեւան համայնքի բյուջե գանձել 45 ազար 560 դրամ, քաղաքացի Ալեքսանդր Բաղմանյանից գանձել 60 հազար 500 դրամ, քաղաքացի Մարիամ Ասատրյանից՝32 հազար դրամ, քաղաքացի Ռադիկ Մարգարյանից՝ 41 հազար 280 դրամ, քաղաքացի Արազբեկ Խաչատրյանից՝55 հազար 640 դրամ:

Համայնքապետարանը աշխատանքներ է կատարում, որպեսզի բնակիչները քաղաքի կենտրոնով հոսող, Իջեւանի գեղեցկություն համարվող Աղստեւ գետ աղբ չթափեն, համայնքապետարանի կողմից գետափնյա հատվածում տեղադրվել են տեսախցիկներ, որոնք տեսագրում են բնակիչների կողմից գետ տարատեսակ աղբ նետելու դեպքերը:

Իջեւանի համայնքապետ Ա. Ճաղարյանը, ուսումնասիրելով «Իջեւանի քաղաքային կոմունալ ծառայություն» հիմնարկի տնօրեն Սուրեն Չիբուխչյանի զեկուցագիրը եւ կից ներկայացված վարչական իրավախախտման վերաբերյալ 2026թ. հունվարի 8-ին կազմված արձանագրությունը՝ կից լուսանկարներով, Իջեւանի համայնքապետարանի կողմից տեղադրված տեսախցիկով արձանագրված, Իջեւան քաղաքի Երեւանյան 8 հասցեում գործող «Գագիկ Սարդարյան» ԱՁ-ի շենքից 2025թ դեկտեմբերի 31-ին՝ ժամը 15:14-ին, Աղստեւ գետ աղբ նետելու փաստի առիթով վարչական պատասխանատվության ենթարկելու հարցով հունվարի 21-ին որոշել է Գագիկ Սարդարյան» ԱՁ-ի նկատմամբ նշանակել վարչական տուգանք (տույժ) սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի չափով՝ 150.000 դրամ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

«ՀՈՒԴԱՅԻ» ԳՈՐԾՈՎ ՎԿԱՆԵՐԸ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ» ՕՐԱԹԵՐԹԸ ՀԱՂԹԵԼ Է ԴԱՏԱՎՈՐԻՆ

«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊ ընկերությունը իր՝ www.armlur.am լրատվական կայքում հրապարակել է հոդված՝ հետեւյալ վերնագրով եւ բովանդակությամբ. «Դատական համակարգի քաոսը շարունակվում է. «գրագրության» սկանդալից հետո ԲԴԽ թեկնածու Ռուբիկ Մխիթարյանը դիմումից հրաժարվել է. դատական համակարգում ուշագրավ զարգացումներ են. ԲԴԽ դատավոր անդամի թափուր տեղի համար իրենց թեկնածությունները են առաջադրել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Վազգեն Ռշտունին եւ Ռուբիկ Մխիթարյանը, որի անվան շուրջ աղմկահարույց պատմություններ են: Բանն այն է, որ դատական համակարգը լքում են դատավորներ, որոնց հեռացման պատճառը խորը արմատներ ունի: Մասնավորապես, Ռուբիկ Մխիթարյանի «թեթեւ ձեռքով» իշխանություններին է հասել գրագրություն, որտեղ դատավորները ներքին քննարկումներ են ունեցել, հայհոյանքներ են հնչել իշխանության հասցեին: ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝ գրագրությունը իշխանություններին հասցրել է Ռուբիկ Մխիթարյանը: Եւ ահա դատական համակարգում այս քաոսից հետո Մխիթարյանը ԲԴԽ անդամ դառնալու դիմումը հետ է վերցրել, քանի որ դատական համակարգը բավականին քննադատաբար է մոտեցել նրա այս քայլին, ու առհասարակ չեն օփվում նրա հետ, ուստի գիտակցելով, որ նրան չեն ընտրի, վերջինս դիմումը հետ է վերցրել: Մտացվում է՝ ԲԴԽ միակ թեկնածուն մնում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Վազգեն Ռշտունին»:

Այս հոդվածի մասով Ռուբիկ Մխիթարյանը դիմել է դատարան եւ պահանջել «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ-ին պարտավորեցնել զրպարտություն համարվող փաստացի տվյալները հրապարակայնորեն հերքել, ինչպես նաեւ զրպարտության համար պատվին եւ արժանապատվությանը պատճառված վնասը փոխհատուցել՝ 3 000 000 ՀՀ դրամի չափով:

Ներկայանալով 24.09.2025թ. հրավիրված դատական նիստին, ի թիվս այլնի, մեր ներկայացուցիչը միջնորդել է որպես վկա դատարան հրավիրել եւ հարցաքննել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախկին դատավորներ Արշակ Վարդանյանին եւ Կարեն Մարդանյանին՝ միաժամանակ պնդելով՝ «այն, որ բարձր հեղինակություն ունեցող դատավորներ Արշակ Վարդանյանը, Սերգեյ Մարաբյանը, Անդրանիկ Մնացականյանը եւ Կարեն Մարդանյանն անսպասելի հրաժարականներ են ներկայացրել, խոսում է դատական համակարգում տիրող իրական քաոսի մասին: Այն, որ գոյություն է ունեցել խմբակային «չատ», եւ հրաժարական ներկայացրած դատավորները, ինչպես նաեւ հայցվորը, եղել են այդ «չատ»-ի անդամներ, եւ իրենցից միայն Մխիթարյանն է շարունակում պաշտոնավարել եւ դեռ մի բան էլ առաջխաղացում է ունեցել, լրացուցիչ կհիմնավորվի, ինչով էլ պայմանավորված՝ ակնհայտ կդառնա, որ այս ամենը զրպարտություն չի կարող հանդիսանալ:

Ավելին, դատավորները եւս հասարակության մի մասն են կազմում, ընդորում՝ ինտելեկտուալ մասը, ովքեր եւս ունեն բոլոր այն իրավունքները, ինչ հասարակության մնացած անդամները:

Մասնավորապես, ինչպես դատական, այնպես նաեւ մնացյալ իրավաբանական համայնքին շատ հետաքրքիր է, թե ինչպես պատահեց, որ ամենաարժանավոր, կենսագրությամբ անբասիր վարքագիծ ունեցող եւ իրավաբանական համայնքում ամենաբարձր վարկանիշ ունեցող 4 դատավոր հրաժարականներ են ներկայացրել՝ առանց բացահայտելու բուն պատճառները: Ավելին, քանի որ այդ իրադարձությանը պետք է հետեւեր նաեւ ԲԴԽ անդամի ընտրություն, որին որպես թեկնածու հանդես էր գալիս նաեւ հայցվորը, հետեւաբար, դատավորներն առավել շահագրգիռ պետք է լինեին՝ պարզելու, թե որն է այդ թվում նաեւ՝ ԲԴԽ անդամ հանդիսացող Արշակ Վարդանյանի հրաժարականի պատճառը: Հետեւաբար, այս ամենը լուսաբանելու իր գործառույթն իրականացնելով՝ պատասխանողը կատարել է լրագրողահետազոտական աշխատանք, ինչի արդյունքում ձեռք է բերել հետաքրքրական տեղեկությունները: Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողի ներկայացուցիչը խնդրել է հայցն ամբողջությամբ մերժել:

Դատարանը 20.01.2026 թվականի վճռով որոշել է Հայցվորի պահանջը մերժել ամբողջությամբ:

Դատարանն արձանագրել է, որ այս վեճով անհրաժեշտ է պատասխանել հետեւյալ հարցին՝

արդյո՞ք ««Դատական համակարգի քաոսը շարունակվում է. «գրագրության» սկանդալից հետո ԲԴԽ թեկնածու Ռուբիկ Մխիթարյանը դիմումից հրաժարվել է»» հրապարակումով կատարված արտահայտությունները, մասնավորապես, վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ռուբիկ Մխիթարյանի՝ ԲԴԽ անդամի թափուր տեղի համար առաջադրվելու դիմում ներկայացնելու, եւ չընտրվելու հնարավորությունը գիտակցելով՝ իր կողմից ներկայացված թեկնածության դիմումը հետ վերցնելու մասին, ինչպես նաեւ որոշ դատավորների ներքին քննարկումներ եւ իշխանության հասցեին հայհոյանքներ պարունակող գրագրությունը Ռուբիկ Մխիթարյանի կողմից իշխանություններին հասցնելու մասին» արտահայտությունները կարող են համարվել զրպարտություն:

Դատարանը նշել է՝ Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող դատարանը չի կարող դատավորի կողմից իշխանություններին որեւէ տեղեկություն հայտնելը, որեւէ հանգամանքի մասին իրազեկելը դիտարկել որպես զրպարտություն, քանի որ այդ հանգամանքը բոլոր դեպքերում չի արատավորում դատական իշխանության ներկայացուցչին, չի նվաստացնում նրա արժանապատվությունը:

Ինչ վերաբերում է խնդրո առարկա հրապարակման վերնագրում տեղ գտած հետեւյալ արտահայտություններին՝ «դատական համակարգի քաոս», «գրագրության սկանդալ», ինչպես նաեւ հետեւյալ արտահայտությանը՝ «չընտրվելու հնարավորությունը գիտակցելով՝ դիմումը հետ է վերցրել», ապա դրանք փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում արված հետեւություններ են, պատասխանողի կողմից տրված սուբյեկտիվ գնահատական, այսինքն, պատասխանողը ոչ թե դիտավորություն է ունեցել արատավորելու հայցվորին, այլ նշված արտահայտություններով որոշակի չափազանցությամբ արտահայտել է իր գնահատողական դատողությունները:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Հունվարի 26-ից փետրվարի 1-ը ՆԳՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում գրանցվել է 493 դեպք, որից 138-ը՝արտակարգ:*

ԼՈՒՐԵՐ

ՍՈՒՐ ՇՆՉԱՌԱԿԱՆ ՎԱՐԱԿՆԵՐԻ ՆՎԱՋԵՑՈՒՄ

2026 թվականի 5-րդ շաբաթվա ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է սուր շնչառական վարակներով պայմանավորված հիվանդացության ցածր ակտիվություն: Այս մասին հայտնում է ՀՎԿԱԿ-ը:

ՍԾՎ-ով պայմանավորված հիվանդացությունը նախորդ շաբաթվա համեմատ նվազել է 1.5 անգամ, իսկ նախորդ՝2025 թվականի միեւնույն ժամանակահատվածի համեմատ ցածր է 2.8 անգամ:

Ընդհանուր դեպքերի գրեթե 80.3%-ը կազմում են 0-18 տարեկանները, առավել բարձր ցուցանիշը շարունակվում է արձանագրվել 0-4 տարեկանների շրջանում:

Հայաստանի Հանրապետությունում շարունակվում են շրջանառվել ռինովիրուսի, ռեսպիրատոր սինցիտիալ վիրուսի, պարագրիպի, ադենովիրուսի, COVID-19-ի հարուցիչները:

ՀՎԿԱԿ-ը հորդորում է.

- խուսափեք սուր շնչառական վարակին բնորոշ երույթներով հիվանդների հետ շփումից,
- եթե հիվանդ եք՝մնացեք տանը, հատկապես՝ սուր շնչառական վարակներին բնորոշ ախտանշաններով երեխաներին մի թույլատրեք հաճախել մարդաշատ վայրեր,
- եթե հիվանդ եք, հրավիրեք տեղամասային մանկաբույժին, թերապեւտին կամ ընտանեկան բժշկին եւ մի զբաղվեք ինքնաբուժմամբ,
- մի օգտագործեք հակաբիոտիկներ, քանի որ դրանք ցուցված չեն գրիպի եւ սուր շնչառական վարակների բուժման համար,
- հագնվեք եղանակին համահունչ,
- պահպանեք հազի եւ փռշտալու վարվելակարգը,
- օգտագործեք հնարավորինս շատ հեղուկներ,
- հաճախակի օդափոխեք փակ տարածքները,
- հետեւեք անձնական հիգիենային:

ՋՈՀԵՐԻ ԹԻՎԸ ՀԱՍԵԼ Է 74-Ի

Ինդոնեզիայի Արեւմտյան Ճավայի նահանգում սողանքի հետեւանքով զոհերի թիվը հասել է 74-ի: Այս մասին հաղորդել է Tempo լրատվական հարթակը՝ վկայակոչելով տեղական իրավապահ մարմիններին:

Ավելի վաղ ստացվել էր տեղեկատվություն 49 զոհի մասին: Վեց մարդ մինչ օրս համարվում է անհետ կորած: Որոնողափրկարարական աշխատանքները շարունակվում են:

Միջադեպը տեղի է ունեցել հունվարի 24-ին Արեւմտյան Բանդունգի շրջանում, որտեղ հորդառատ տեղումների պատճառով սողանքի տակ է մնացել Պասիր Լանգու բնակավայրը:

TEAM TELECOM ARMENIA

ԸՆՏՐՈՒՄ Է ԱՐԴԱՐ ՇՈՒԿԱՆ

Team Telecom Armenia-ն, նպատակ ունենալով դարձաբանել վճարումների ընդունման փոփոխությունների վերաբերյալ մամուլում շրջանառվող որոշ մեկնաբանություններն ու գնահատականները եւ անդրադառնալով հանրությանը հուզող մի շարք հարցերի, տեղեկացնում է.

«Ֆաստ Շիֆթ» ՍՊԸ, «Իդրամ» ՍՊԸ, «Իզի փեյ» ՍՊԸ եւ «Թել-Սել» ԲԲԸ վճարահաշվարկային ընկերությունների կողմից Team Telecom Armenia-ին առաջարկված պայմանները ենթադրում էին ծառայությունների համար էապես ավելի բարձր սակագներ, քան այն սակագները, որոնք նույն ընկերությունները կիրառում են, օրինակ, կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների նկատմամբ:

Team Telecom Armenia-ն գործընկերներին առաջարկել է համապատասխանեցնել սակագները շուկայում ներկայում գործող պայմաններին, այդ թվում՝ քննարկելով փուլային նվազեցման հնարավորությունը՝ փոխադարձ շահերի հաշվառմամբ: Այդ առաջարկները ներկայացվել են հիմնավորված կերպով՝ շեշտադրելով շուկայական հավասարակշռության եւ արդար մրցակցային միջավայրի կարեւորությունը:

Սակայն Team-ի կողմից ներկայացված առաջարկներին չի հետեւել որեւէ հիմնավորված հակադարձում կամ բացատրություն, թե ինչու են այլ ոլորտների ծառայություններ մատուցող ընկերությունների համար գործում ավելի ցածր սակագներ, մինչդեռ հեռահաղորդակցության ընկերության դեպքում կիրառվում են էապես տարբեր պայմաններ:

Team Telecom Armenia-ն շարունակում է համագործակցությունը բոլոր այն վճարահաշվարկային ծառայություններ տրամադրող գործընկերների հետ, որոնք գործում են ներկայիս շուկայական սակագներին համապատասխան արդար եւ թափանցիկ պայմաններով:

Միաժամանակ, կարեւորելով իր բաժանորդների հարմարավետությունը, Team Telecom Armenia-ն վստահեցնում է, որ պատրաստ է շարունակելու վերոնշյալ վճարահաշվարկային ընկերությունների հետ համագործակցությունը փոխշահավետ եւ արդար շուկայական պայմանների առկայության դեպքում:

Team Telecom Armenia-ի մասին

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին: Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԻՐԱՆԸ ԱՄՆ-Ի ՀԵՏ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ Իրանը պետք է Միացյալ Նահանգների հետ «բավարարող» համաձայնագիր կնքի, որը կհանգեցնի նրան, որ Իսլամական Հանրապետությունը միջուկային զենք չի ունենա:

«Ես չգիտեմ՝ արդյոք նրանք կհամաձայնվեն դրան: Բայց նրանք մեզ հետ բանակցություններ են վարում: Լուրջ բանակցություններ»,-այս մասին Թրամփն ասել է լրագրողներին՝Air Force One ինքնաթիռով Ֆլորիդա թռիչքի ընթացքում:

Թրամփը հրաժարվել է լրագրողներին ասել, թե ինչ է նա մտադիր անել Իրանի հետ: Ավելի վաղ ԱՄՆ նախագահը հայտարարել էր, որ բանակցությունների արդյունքներով Վաշինգտոնը կորոշի, թե ինչպես վարվել Թեհրանի հետ:

«Տեսնենք՝կարո՞ղ ենք ինչ-որ բան անել, հակառակ դեպքում տեսնենք՝ ինչ կլինի... Մենք ունենք մեծ ռազմածովային նավատորմ, որը ուղղվում է այնտեղ»,-ասել էր նա Fox News-ին:

Թրամփն ավելացրել է, որ անվտանգության նկատառումներից ելնելով՝ ԱՄՆ-ն Մերձավոր Արեւելքում իր դաշնակիցներին չի տեղեկացնում հնարավոր հարվածների պլանների մասին:

«Մենք չենք կարող նրանց պատմել պլանի մասին: Եթե ես նրանց պատմեի պլանի մասին, դա գրեթե նույնքան վատ կլիներ, որքան ձեզ պլանի մասին պատմելը. իրականում, դա կարող էր ավելի վատ լինել»,- հայտարարել է նա:

Դոնալդ Թրամփը հունվարին սպառնացել է միջամտել Իրանի իրավիճակին այն բանից հետո, երբ երկրում խստորեն ճնշել էին հակակառավարական բողոքները: Այս ֆոնին ԱՄՆ-ն Իրանի ափեր է ուղարկել «Աբրահամ Լինքոլն» ավիակիր նավի գլխավորած ռազմածովային հարվածային խումբը:

Սրա հետեւանքով մտավախություններ են առաջացել, որ ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ կարող է ուղիղ հակամարտություն բռնկվել: Թեհրանն ավելի վաղ նախազգուշացրել էր, որ հարձակման դեպքում կպատասխանի ԱՄՆ բազաների, նավերի ու դաշնակիցների, մասնավորապես Իսրայելի դեմ հրթիռային հարվածներով:

Թրամփը համարում է, որ Իրանը նախընտրելու է համաձայնագիր կնքել իր միջուկային ու հրթիռային ծրագրերի վերաբերյալ, քան պատերազմել ԱՄՆ-ի հետ:

ՌԱԶՄԱԿԱՆ ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐ ԵՎ 227 ՕԴԱՉՈՒ

Ավստրալիայի թագավորական ռազմաօդային ուժերը Նեւադայի Նելիս ռազմաօդային բազայում տեղակայել են վեց F-35A Lightning II եւ մեկ E-7A Wedgetail ինքնաթիռ, ինչպես նաեւ մոտ 227 օդաչու՝ մասնակցելու աշխարհի ամենաառաջադեմ օդային մարտական ուսուցման երկու վարժանքներին: Այս մասին հաղորդում է Ավստրալիայի պաշտպանության նախարարությունը:

2026 թվականի փետրվարի 2-ից «Կարմիր դրոշ Նելիս» (Red Flag Nellis) եւ «Բամբուկե արծիվ» (Bamboo Eagle 26-1) վարժանքները կմիավորեն Ավստրալիայի, ԱՄՆ-ի եւ Միացյալ Թագավորության օդաչուներին:

«Այս վարժանքներն ապահովում են խիստ իրատեսական ուսումնական միջավայր, որտեղ մենք կարող ենք ինտեգրել տարբեր հնարավորություններ եւ ամրապնդել մեր կարողությունները՝գործելու հիմնական դաշնակիցների եւ գործընկերների հետ», - ասել է Ավստրալիայի զորախմբի հրամանատար Մեթյու Դեւեսոնը:

Նա նշել է, որ երկու վարժանքներն էլ մոդելավորում են ժամանակակից սպառնալիքների լայն շրջանակ, ներառյալ օդային, ցամաքային եւ ծովային հնարավորությունները, ինչպես նաեւ տիեզերական եւ կիբեռոլորտային սպառնալիքները: Նրա խոսքով՝ Ավստրալիայի մասնակցությունն այս զորավարժություններին ամրապնդում է զսպման ուժը, նպաստում տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը, ինչպես նաեւ ամրապնդում է երկարատեւ գործընկերությունները:

«Ավստրալիան առաջին ոչ ՆԱՏՕ-ի անդամ երկիրն էր, որը մասնակցեց «Կարմիր դրոշ Նելիս» զորավարժություններին 1980 թվականին, եւ մենք մասնակցել ենք «Բամբուկե արծիվ» զորավարժություններին դրանց մեկնարկից՝2024 թվականից ի վեր», - ասել է Դեւեսոնը:

«Կարմիր դրոշ Նելիս» եւ «Բամբուկե արծիվ» զորավարժություններն ԱՄՆ-ի եւ դաշնակիցների ռազմաօդային ուժերի միջեւ անցկացվող ամենամեծ համատեղ ռազմաօդային զորավարժություններն են, որոնք ուղղված են բարձր տեխնոլոգիական հակամարտություններին նախապատրաստվելուն:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՆՈՒՆԴ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ» ՕՐԱԹԵՐԹԸ ԴԱՐՁԱՎ 15 ՏԱՐԵԿԱՆ

Կան բառեր, որոնք պարզապես տպագրվում են: Եւ կան բառեր, որոնք փոխում են իրականությունը: Մեր կարգախոսն է՝ «Օրաթերթ բոլորի եւ ամեն ինչի մասին՝ առանց տաբուների»: 15 տարի առաջ ծնվեց մի օրաթերթ, որը որոշեց ոչ միայն գրել, այլ պահանջել պատասխան: Սա պատմություն է այն մասին, թե ինչպես է խոսքը ուժ դարձել:

2011 թվականի փետրվարի 1-ը դարձավ սկիզբ: Լույս տեսավ առաջին համարը՝ 5000 տպաքանակով: Թվերը կարող են թվալ պարզապես վիճակագրություն, բայց իրականում դրանք վստահության առաջին նշաններն էին: Պահանջարկը գերազանցեց սպասումները: Երեք օր շարունակ թերթը անվճար բաժանվում էր ընթերցողներին՝ ճանաչելիություն ձեւավորելու համար:

Այդ օրվանից սկսվեց մի ճանապարհ, որը լի էր ոչ միայն նյութերով ու էջերով, այլ նաեւ փորձություններով:

Նոր մեդիա դարաշրջանում թերթը մնում է անկախ եւ ազդեցիկ:

Անցել ենք ճնշումների միջով, դատական ճանապարհով, ֆինանսական զրկանքներով, բայց չենք նահանջել, «Ժողովուրդ»-ի պայքարը լռության ու անտարբերության դեմ է:

Հիմա էլ ունենք 27 դատական հայց, լրագրողի իշխանությունը փորձում է ճնշել մեզ: Բայց չենք լռելու, մենք գիտենք մեր իրավունքների ու պարտականությունների չափաբաժինը:

●2012-ին գրել էինք, որ 67-ամյա թոշակառու Սուսաննա Նավասարդյանը լոտո էր շահել, որից հետո սոցծառայությունից կանչել եւ տեղեկացրել էին, որ զրկված է նպաստից, քանի որ լրացուցիչ եկամուտ ունի: «Ժողովուրդ»-ի շնորհիվ տիկնոջ նպաստը վերականգնեցին:

●2013-ին մեզ էր դիմել Նունե Մկրտչյանը՝ բողոքելով, որ 4 տարի է՝ ՀՀ վերաքննիչ դատարանի դատավոր Աիդա Հովհաննիսյանը խաբում ու չի վերադարձնում 9000 ԱՄՆ դոլարի իր պարտքը: Հետաքննությամբ պարզեցինք, որ նա միակ տուժածը չէր, եւ մեր հրապարակումից հետո ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահը միջնորդեց քննել դատավորի վարքը:

●2014թ. գրել էինք, որ թիվ 190 դպրոցում տնօրենը դրամահավաք է կազմակերպում՝ 3000 դրամ: «Ժողովուրդ»-ի հրապարակման հաջորդ օրը հավաքած դրամները հետ բաժանվեցին:

●2014թ. գրեցինք, որ Շիրակի ոստիկանապետ Կարեն Բաբակեխյանը «Արջի թաթ» ռեստորանում խորոված էր կերել գործընկերների հետ եւ հրաժարվել վճարել՝ պատճառաբանելով, որ միսը հում էր: Հրապարակումից հետո բարձրաստիճան ոստիկանը ռեստորանի պարտքը մարեց:

●2020-թ. «Ժողովուրդ» օրաթերթը գրեց, որ Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի հրամանով Ինֆեկցիոն հիվանդանոցին տրվել է հավելյալ 71,8 մլն դրամ՝ «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների» նպատակով: Սակայն ծառայություններ չեն մատուցվել եւ Արմեդ համակարգ չեն մուտքագրվել այդ ծավալով: Մեր բացահայտումը կցված է ՔՈՎԻԴ 19-ի քրեական գործին: Մինչ օրս Հակակոռուպցիոն կոմիտեն քննում է գործը:

●«Կյանքը ճաղերի հետեւում» ArmLur.am-ի հաղորդաշարին Վիտալիոս Խիոնիդիսը պատմել էր, թե ինչպես է ֆինանսական վիճակից դրդված մտել բանկ ու երազում էր հասնել իր երեխաներին:

ArmLur.am-ի հրապարակումը մեծ հնչեղություն ստացավ, եւ ՀՀ նախագահը ներում շնորհեց դատապարտյալին:

Այս ամենը մի փոքր մասն է արված աշխատանքի: Ձեռքբերումները վկայում են հետեւողական աշխատանքի, պատասխանատու մոտեցման եւ հստակ նպատակների մասին: Առաջիկայում եւս շարունակվելու են նախաձեռնությունները՝ ուղղված կայուն առաջընթացին եւ նոր արդյունքների գրանցմանը:

«Ժողովուրդ» օրաթերթը պարզապես լրատվամիջոց չէ, այլ իրական չորրորդ իշխանություն: Շնորհակալություն մեզ հետեւելու համար:

ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ԺԱՄԱՆՑ

ՄՆՈՒՓ ԴՈԳԸ ԱՋԱԿՑՈՒՄ Է ԴՍՏԵՐԸ

Սնուփ Դոգը աջակցում է իր դստերը անհավանական անձնական ողբերգությունից հետո: Ռեփերի 26-ամյա դուստրը՝ Քորի Բրոդուսը, հայտարարել է իր 10 ամսական դստեր՝ Քոդիի մահվան մասին:

«Երկուշաբթի օրը ես կորցրեցի կյանքիս սերը: Իմ Քոդիին», - գրել է նա Instagram-ի Stories-ում՝ կիսվելով սեւ-սպիտակ լուսանկարով, որտեղ նա գրկում է երեխային:

Քորի Բրոդուսն առաջին անգամ իր հղիության մասին հայտարարել է 2024 թվականի դեկտեմբերին եւ 2025 թվականի փետրվարին ասել, որ իր դուստրը վաղաժամ է ծնվել: «Արքայադուստրը ծնվել է 6 ամսական», - գրել էր նա այդ ժամանակ: «Ես լաց էի լինում ու լաց լինում՝ մեղադրելով ինձ, որ չեմ կարողացել նրան տալ այն ամենը, ինչ նրան անհրաժեշտ էր: Բայց Աստված միշտ ցույց է տալիս ինձ, որ Նա ինձ հետ է: Նա ծնվել է 25 շաբաթականում, եւ նա լավագույնն է: Շնորհակալություն, Տե՛ր»:

Սեպտեմբերին Քորին հայտնել է, որ իր դուստրը վեց ամիս գտնվել է նորածնային վերակենդանացման բաժանմունքում (NICU):

Քորիի եւ նրա փեսացու Ուեյն Դյուսի ընտանեկան ծրագրերը հետաձգվել են այն բանից հետո, երբ որդին, ում վեց տարեկանում գայլախտ էին ախտորոշել, 2024 թվականի հունվարին կաթված է տարել:

Վերջերս The Jennifer Hudson Show-ին տված հարցազրույցում Սնուփ Դոգը հուզականորեն խոսել է իր դստեր եւ փեսացուի միջեւ եղած սիրո մասին. «Ես գիտեմ, որ նա է այն մեկը: Երբ խոսքը վերաբերում է քո դստերը, դու նրան չես տալիս որեւէ մեկին, ով պատշաճ կերպով հոգ չի տանում նրա մասին: Ես նրան հետեւել եմ ծննդյան օրվանից մինչեւ հիմա, ուստի պետք է անհանգստանամ»:

ՋԱՍԹԻՆ ԲԻԲԵՐԸ ՑՆՑԵԼ Է ԲՈԼՈՐԻՆ

Ջասթին Բիբերը չորս տարվա ընթացքում առաջին անգամ բարձրացել է «Գրեմմի» մրցանակաբաշխության բեմ՝ շփոթեցնելով հանդիսատեսին:

Սա Բիբերի առաջին «Գրեմմի» ելույթն էր 2022 թվականից ի վեր: Այդ ժամանակվանից ի վեր երգիչը հազվադեպ է բեմ բարձրացել, միայն անակնկալ ելույթներ է ունեցել SZA համերգներին եւ մի քանի մասնավոր միջոցառումներին առողջական խնդիրների պատճառով շրջագայությունը չեղարկելուց հետո:

Երգչի հանդերձանքը կամ դրա բացակայությունը անմիջապես քննարկման առարկա է դարձել սոցիալական ցանցերում: Կարծիքները բաժանվել են. ոմանք հիացել են ելույթի անկեղծությամբ եւ խոցելիությամբ, իսկ մյուսները քննադատել են կերպարի ընտրությունը:

Որոշ օգտատերեր մտահոգություն են հայտնել երգչի համար. «Սա իսկապես տխուր է: Այս մարդը ակնհայտորեն օգնություն է խնդրում, եւ ոչ ոք չի նկատում»:

Բիբերի վերադարձը «Գրեմմի» մրցանակաբաշխության բեմ համընկել է նրա «Swag» (2025) ալբոմի հաջողության հետ, որը Billboard 200-ում զբաղեցրել է երկրորդ հորիզոնականը: Այն ռեկորդային լսումներ է ունեցել, նրա 21 երգերից 16-ով Billboard Hot 100-ում են:

Այս տարի Բիբերը նաեւ գլխավորելու է Coachella փառատոնը՝ կնքելով պատմական պայմանագիր՝ ավելի քան 10 միլիոն դոլար արժողությամբ, ինչը նրան դարձնում է փառատոնի պատմության մեջ ամենաբարձր վարձատրվող կատարողը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄՏԱԴԻՐ Է ԲՈՅԿՈՏԵԼ

Պորտուգալիայի հավաքականի եւ «Ալ Նասրի» 40-ամյա հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն դժգոհ է իրավիճակից սաուդյան ակումբում եւ հրաժարվում է մասնակցել առաջին հանդիպումներին, գրում է պորտուգալական A Bola-ն: Ռոնալդուն մտադիր է բոյկոտել «Ալ Նասրի» հաջորդ հանդիպումը «Էր Ռիայդի» դեմ: Նա դժգոհ է, թե ինչպես է Սաուդյան Արաբիայի պետական ներդրումային հիմնադրամը կառավարում ակումբը եւ բավարար ներդրումներ չի կատարում: Ռոնալդուն կարծում է, որ «Ալ Նասրի» ղեկավարությունը վնաս է տալիս ակումբին եւ «Ալ Հիլալի» համեմատ պակաս ակտիվ է տրանսֆերային շուկայում:

Ռոնալդուն «Ալ Նասրում» է հանդես գալիս 2023 թվականից: Նրա պայմանագիր նախատեսված է մինչեւ 2027 թվականը:

ՄԵԼԻՔՅԱՆԸ «ՍԹԱՐՎԻՆԳՍ ԲԱՋԵԼ»-ՈՒՄ

Բասկետբոլի Հայաստանի հավաքականի խաղացող Յուրա Մելիքյանը պայմանագիր է կնքել Շվեյցարական «Սթարվինգս Բազել» ակումբի հետ: Այս մասին փոխանցում է Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիան:

«Սթարվինգս Բազելը» հանդես է գալիս Շվեյցարիայի Swiss Basketball League (SBL) բարձրագույն առաջնությունում եւ բազմիցս մասնակցել է Շվեյցարիայի առաջնության փլեյ-օֆֆ փուլերին, 2010 թվականին նվաճել է Շվեյցարիայի գավաթը:

ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է

Նիգերիացի հարձակվող Ադեմոլա Լուքմանը իտալական «Ատալանտայից» տեղափոխվում է Մադրիդի «Աթլետիկո»: Իսպանական ակումբը հայտարարել է 28-ամյա ֆուտբոլիստի հետ համաձայնության մասին: Նա արդեն Մադրիդում է եւ բուժզննում անցնելուց հետո կկնքի պայմանագիր: Ոչ պաշտոնական տվյալներով տրանսֆերի գումարը կկազմի 35 միլիոն եվրո, նախատեսված է նաեւ 5 միլիոն եվրո բոնուս:

Ադեմոլա Լուքմանը 2022 թվականից էր հանդես գալիս «Ատալանտայում»՝ 137 խաղում խփելով 55 գոլ, կատարելով 27 գոլային փոխանցում:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԹԵՆԻՍԻՍՏ

«Մեծ սաղավարտի» մրցաշարերի 24-ակի չեմպիոն Նովակ Ջոկովիչը դարձավ Ավստրալիայի բաց առաջնության տղամարդկանց մենախաղի եզրափակիչ դուրս եկած ավագագույն թենիսիստը պատմության մեջ: Սերբ մարզիկն այդ նվաճմանը հասավ 38 տարեկան եւ 241 օրականում:

Նախորդ ռեկորդակիր Քեն Ռոզուոլը 1972 թվականին Ավստրալիայի բաց առաջնության եզրափակիչ էր դուրս եկել 37 տարեկան եւ 54 օրականում, հաղորդում է OptaAce-ը:

Ջոկովիչը 11-րդ անգամ հանդես կգա AusOpen-ի եզրափակիչում: Նա այս մրցաշարի 10-ակի չեմպիոն է:

● Փետրվարի 3-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա The Beatles. ճանապարհորդություն ժամանակի եւ երաժշտության միջով պիեսը:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՎԱՐՉԱԿԱՆ

ՀԱՐՑ. Վարչական ակտերը ո՞ր դեպքում եւ ի՞նչ ժամկետներում են ներկայացվում հարկադիր կատարման:

Արտակ Կարապետյան, 39 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Դրամական պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածին համապատասխան վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո՝ եռամսյա ժամկետում, իսկ վարչական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու դեպքում՝ հետաձգելու կամ տարաժամկետելու ժամկետի ավարտից հետո՝ եռամսյա ժամկետում:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ակտը, որպես ընդհանուր կանոն, դառնում է անբողոքարկելի այն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 ամսվա ընթացքում, վարչական բողոք չներկայացնելու դեպքում:

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ակտը դառնում է անբողոքարկելի այն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 ամսվա ընթացքում, վարչական բողոք չներկայացնելու դեպքում:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ի՞նչ իրավունքներ եւ պարտականություններ ունեն աղաստան հայցողները:

Գրիգոր Ստեփանյան, 43 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստան հայցողները Հայաստանում ազատ տեղաշարժի, աշխատելու, կրթության, անվճար իրավաբանական խորհրդատվություն ստանալու, անվճար բուժօգնություն ստանալու եւ մի շարք այլ իրավունքներ ունեն: Նրանք իրենց իրավունքներից օգտվելիս պետք է հարգեն ՀՀ քաղաքացիների, այլ անձանց օրինական շահերը, իրավունքները եւ ազատությունները, պահպանեն հասարակական կարգը, ՀՀ անվտանգությունը:

ՀՀ ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ապաստան հայցողները պարտավոր են համագործակցել Միգրացիոն ծառայության հետ, տրամադրել հավաստի ու ճշմարիտ տեղեկություններ, վճարել բոլոր տեսակի հարկերն ու տուրքերը, ինչպես Հայաստանի քաղաքացիները: Նրանք պարտավոր են պահպանել Հայաստանի օրենսդրության պահանջները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը «Ժողովուրդ»-ի

Շնորհավոր 15-ամյակդ, «Ժողովուրդ»: Թող քո էջերում միշտ տեղ լինի ճշմարտության համար, թող հարցերը չպակասեն, իսկ համարձակությունը երբեք չհոգնի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 + 2 + 2 + 6
Կոտայքի լեռներ	-1 + 2 + 2 + 6
Կոտայքի նախալեռներ	+ 1 + 4 + 6 + 9
Գեղարքունիք	+ 1 + 4 + 4 + 9
Լոռի	+ 2 + 5 + 11+ 14
Տավուշ	+ 2 + 4 + 10 + 14
Արագածոտնի լեռներ	- 12 - 15 - 4 - 7
Արագածոտնի նախալեռներ	0 + 4 + 4 + 8

Արարատ	+ 1 + 5 + 5 + 9
Արմավիր	0 + 3 + 6 + 9
Վայոց ձորի լեռներ	-1 + 3 + 2 + 6
Վայոց ձորի նախալեռներ	+ 1 + 4 + 6 + 10
Սյունիքի լեռներ	0 + 3 + 3 + 8
Սյունիքի նախալեռներ	+ 5 + 9 + 12 + 16
Սյունիքի հովիտներ	+ 6 + 11 + 18 + 12
Երեւան	+ 1 + 3 + 6 + 8

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **02.02.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*